*Հավելված 1*
*Հաստատված է*
*<<_23_>>__06___ 2014 թ. կնքված*
*N ՀՀ ՏԿՆ ՄՊԾ ՊԸԾՁԲ – 10.09.01.04/02*
*գնման պայմանագրի փոփոխությամբ*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ |
|---|---|---|
| | Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների | |
| | **ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության վարչական շենքի հիմանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ**<br><br>**ք. Երևան, Հր. Քոչարի 4/1 շենքի 2-րդ հարկ** | 1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի շինարարական աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական սպեցիֆիկացիաներին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:<br>2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:<br>3. Տեխնիկական հսկողի հիմնական պարտականություններն են`<br>• հիմնանորոգման աշխատանքների սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում,<br>• ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը հիմնանորոգման աշխատանքների նորմերին և կանոններին,<br>• Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին` կցելով համապատասխան հիմնավորումը,<br>• ստուգել և վերահսկել նյութերի որակը և հիմնանորոգման աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի սպեցիֆիկացիաներում և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,<br>• վերահսկել և գնահատել հիմնանորոգման աշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի հիմնանորոգման աշխատանքների ավարտը` համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի,<br>• ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները , որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար,<br>• ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար,<br>• կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են հիմնանորոգման պայմանագրի իրականացման շրջանակում,<br>• գտնել հիմնանորոգման ժամանակ առաջացող պրոբլեմները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար,<br>• կատարել անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր),<br>• կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը, |